ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2025 թվականի N 1953-Ա

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով, «Հիմնադրամների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հիմնադրման միջոցով ստեղծել Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամ:

2. Սահմանել, որ Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն է:

3. Հաստատել Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

4. Մինչև սույն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ սահմանված կարգով Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի գլխավոր տնօրենի ընտրությունը և նրա հետ պայմանագրի կնքումը՝ Առողջության համընդհա-

նուր ապահովագրության հիմնադրամի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև վեց ամիս ժամկետով նշանակել Սամվել Ջանիբեկի Խարազյանին (անձնագիր՝ AL0356349, վավերական է մինչև 25.07.2033):

5. Սահմանել, որ սույն որոշման համաձայն Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի նկատմամբ տարածվում են գլխավոր տնօրենին ներկայացվող՝ սույն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ նախատեսված պահանջները:

6. Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել հիմնադրամի պետական գրանցումը.

2) հիմնադրամի կառուցվածքի և հաստիքացուցակի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատումից հետո եռամսյա ժամկետում հիմնադրամի մրցութային ընթացակարգերով համալրման ենթակա հաստիքներով սահմանված պաշտոններում նշանակել ժամանակավոր պաշտոնակատարներ՝ մինչև այդ հաստիքների մրցութային ընթացակարգերով համալրումը:

7. Սահմանել, որ մինչև «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի համաձայն Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ձևավորումը, օրենքով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ, նշանակվում է Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի հինգ հոգուց բաղկացած ժամանակավոր խորհուրդ, որն իրավասու է վեցամսյա ժամկետում իրականացնելու օրենքով Հոգաբարձուների խորհրդին վերապահված իրավասությունները՝ մինչև օրենքի համաձայն Հոգաբարձուների խորհրդի ձևավորումը, ինչից հետո ժամանակավոր խորհրդի լիազորությունները համարվում են դադարեցված:

8. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին, Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա

ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել հիմնադրամին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրվող գույքի ցանկը:

9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել հիմնադրամի ժամանակավոր խորհրդի կազմը.

2) սույն որոշման 8-րդ կետում նշված ցանկը ներկայացնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել հիմնադրամին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք տրամադրելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

3) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության գործունեության դադարեցման նպատակով սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1301-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» կառավարության և «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» վարչապետի որոշումների նախագծեր՝ դրանցում նախատեսելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության գործունեության դադարեցման աշխատանքները կազմակերպող հանձնաժողով ստեղծելու և Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի հետ հանձնման-ընդունման աշխատանքներ իրականացնելու մասին դրույթներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ